Արձանագրություն N 3

ՇՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի 17 նոյեմբերի 2025թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Ասատրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գոհար Պետրոսյան, Արտաշես Հովհաննիսյան, Սուրեն Հովսեփյան
Հանձնաժողովի քարտուղա՝ Էդվարդ Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Գ. Ասատրյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՇՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման մասին,
3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին,

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0

2. ՇՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման մասին
(Գ. Ասատրյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Անվանումը կամ Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՎՀՀ կամ ՀԾՀ	Հասցեն	Հեռախոսահամարը	Էլ. Փոստի հասցեն
1	Դրախտ-ռեզորտ	05541663	Ք. Գյումրի Ջիվանի 72	096995509	farzadyandavid@gmail.com
2	Օսկար Էլեկտրոնիքս ՍՊԸ				
3	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	02235463	ք. Երևան, Գ. Նժդեհի21	+(37410)449968	vlvtender@gmail.com
4	«ՄԵԳԱ ՍԹՈՐ» ՍՊԸ	01085916	ՀՀ ք. Երևան, Ավան-Աճառյան 37/34	093668413	megastorellc@mail.ru

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված հայտերում հրավերով սահմանված փաստաթղթերի մասին
(Գ. Ասատրյան)

Ընտրված մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են, բացառությամբ **Օսկար Էլեկտրոնիքս ՍՊԸ**-ի մասնավորապես նշված մասնակցի փաստաթղթերում բացակայում է Հավելված 1-ը և Հավելված 2-ը:

Ընտրված մասնակիցների կողմից ներկայացված հայտերում՝ փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ **Օսկար Էլեկտրոնիքս ՍՊԸ**-ի, մասնավորապես նշված մասնակցի կողմից **eauction.am համակարգում՝ ապրանքի ամբողջական նկարագիրը դաշտում, լրացված չէ ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշը և տեխնիկական բնութագիրը:**

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

4.Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Գ. Ասատրյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել՝ **մասնակցին**, որը պետք է ներկայացնեն իր շտկումները էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից սահմանված օրը և ժամին:

Մասնավորապես անհրաժեշտ է նշել ապրանքի հստակ ֆիրմային անվանումը, մակնիշը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության, ինչպես նաև ներկայացնել տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները: Շտկված տարբերակը ներբեռնել էլեկտրոնային աճուրդի համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Գ. Ասատրյան)

ՇՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 20.11.2025թ. 11:00-ին «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, Ք.Գյումրի Պ. Սևակի 4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0

Հանձնաժողովի

Նախագահ՝ Գևորգ Ասատրյան

անդամներ՝ Գոհար Պետրոսյան

Արտաշես Հովհաննիսյան

Սուրեն Հովսեփյան

Քարտուղար՝ Էդվարդ Գրիգորյան

ProTender©